Արձանագրություն N 3

«ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Կապան

«21» մարտ 2019թ.

ժամը 12:00

Մասնակցում էին՝ Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Վիրաբ Մինասյան

հանձնաժողովի անդամներ՝ Նաիրա Հովհաննիսյան

Նունե Բալայան

Անուշ Բախշյան

Լարիսա Հովհաննիսյան

հանձնաժողովի քարտուղար՝ Սահականուշ Գրիգորյան

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին

1. Ընդունել ի գիտություն.

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Նատալի Ֆարմ»ՍՊԸ-ը, «Լիկվոր»ՍՊԸ-ը, «Արֆարմացիա»ՍՊԸ-ը, «Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ը և «Ֆարմասերվիս»ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.1. Ընտրված մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի համաձայն առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2. Հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին տրամադրել է գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:

1.3. Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկների մեկական օրինակները ներկայացրել են հանձնաժողովի քարտուղարին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

2. **Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և «Նատալի Ֆարմ»ՍՊԸ-ի, «Լիկվոր»ՍՊԸ-ի, «Արֆարմացիա»ՍՊԸ-ի, «Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ի և «Ֆարմասերվիս»ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

3. «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ- 19/1» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից են հայտարարվում «Նատալի Ֆարմ»ՍՊԸ-ը, «Լիկվոր»ՍՊԸ-ը, «Արֆարմացիա»ՍՊԸ-ը, «Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ը և «Ֆարմասերվիս»ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝

N 16; 25; 29; 30; 35; 37; 39; 41; 42; 45; 47; 50; 51 և 54 չափաբաժինների համար «Արֆարմացիա»ՓԲԸ-ին;

N 10 չափաբաժնի համար «Լիկվոր»ՓԲԸ-ին;

N 36; 44; 52; 53 և 58 չափաբաժինների համար «Նատալի Ֆարմ»ՍՊԸ-ին;

N 1; 27 և 43 չափաբաժինների համար «Ֆարմասերվիս»ՍՊԸ-ին;

N 12; 13; 18; 19; 23; 24 և 48 չափաբաժինների համար «Ռիխտեր-Լամբրոն»ՀՁ ՍՊԸ-ին:

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

Նախագահ՝ _____ Վիրաբ Մանասյան

Անդամ՝ _____ Նաիրա Հովհաննիսյան

_____ Նունե Բալայան

_____ Անուշ Բախշյան

_____ Լարիսա Հովհաննիսյան

Քարտուղար՝ _____ Սահականուշ Գրիգորյան